

ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵԷՆԻՅԷՀՐԾԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ԴԵՒՈՑԱՅ ՎԱՆԱՑ (ԻՐԻ 1700—1782)

ՂԵԼՈՅԱՅ ՎԱՆՔՆ Ս. ԳԷՈՐԳԱՅ, ՍԵՐԱՍՏԻՈՅ ՎԱՂԵՄԻ ՎԱՆՔԵՐԷՆ ՄԷԿՆ, Ի ՎԱՂՈՒՅ ԿԱՐՈՒՐՈՒՄ Է ԱՌԱՍԿԵԼՆԵՐՈՒ ՄԷՉ:

Հ. Ղ. Ինճիճեան (Աշխարհագրութիւն, Ասիա, Ա. Հտ., Վենետ. 1806, էջ 288) կը յիշէ «Դեւոնայ», գիւղն՝ որ «Իբր եօթն ժամաւ հեռի է ի սեւասոյ յարեւելեան կողմն նորա, ուր է վանք յանուն սրբոյն գէորգայ, որ յանուն նորա կոչի դեւոնայ վանք. նստի աստ առաջնորդ ուրոյն: Յայսմ վայրի ասնն հալածեալ սրբոյն գէորգայ զգեւս, յայնմանէ կոչեցաւ տեղին դեւոն. իբր թէ տեղի դիւաց»:

Աւելի նորագոյն ժամանակներ՝ Պ. Վ. Նաթանեան (Տեղեկագիր ընդհանուր վիճակին Սեբաստիոյ, Կ. Պոլ. 1877, էջ 144), եւ ակադեմիկներ՝ Ա. Վ. Աղեքսանդրեան (Պատմ. քղբին. Սեբաստ. Վենետ. 1911, էջ 362) եւ Բ. Հայքեցեան (Փոքր Հայքի վանքերը — Սեբաստիոյ վանորայք, «Նոր Այգ», Մարզուան, 1913, էջ 79, 123—4) արդէն աւերակ գի-